# 50. ԹԱԿՅԱՒՈՐ, Ի՞ՆՉ ՊԻՐԻՄ ՔՅՈՒ ՆԸՄԱՆ
## ЦАРЬ-ЖЕНИХ, ЧТО ПРИНЕСТИ ТЕБЕ?




Сканировано с Cam

## ՀԱՐՍԻ ԳՈՎՔԸ

Դեմ Էջմիածնա տյու կայնիր ես,
Խաս ամբարին տյու խակյիր ես.
Աստված քյի պախի պարզիրես.
Պարով պսակդ վայելես:

Դեմ Ալաքամարա տյու կայնիր ես,
Նախշուն ճարիքյ տյու կապիր ես.
Աստված քյի պախի պարզիրես.
Պարով պսակդ վայելես:

Դեմ Սըփկյուրքյին տյու կայնիր ես,
Կարմիր սոլեր տյու խակյիր ես.
Աստված քյի պախի պարզիրես.
Պարով պսակդ վայելես:

Դեմ Վարաքյա տյու կայնիր ես,
Քյանց քյաֆուր վարդ տյու պացվիր ես.
Աստված քյի պախի պարզիրես.
Պարով պսակդ վայելես:

Դեմ Աստվածածնա տյու կայնիր ես,
Ծաղիկ ծաղկոցին նման ես.
Աստված քյի պախի պարզիրես.
Պարով պսակդ վայելես:

## ԹԱԿՅԱՒՈՐ, Ի՞ՆՉ ՊԻՐԻՄ ՔՅՈՒ ՆԸՄԱՆ

Թակյաւոր, ի՞նչ պիրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեվու նըման.
Էն արէկյական, տոր կըծաղկեր,
Ծաղկեր քյու արեվու նըման:

Թակյաւոր, ի՞նչ պիրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեվու նըման,
Էն աղօթարան, տոր կըպացվեր,
Պացվեր քյու արեվու նըման:

Թակյաւոր, ի՞նչ պիրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեվ քյեզ նըման,
Էն կանաչ-կարմիր, տոր կըկապեր,
Կապեր քյու արեվու նըման:

Թակյաւոր, ի՞նչ պիրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեվ քյեզ նըման,
Պալասան ծաղիկ, տոր կըծաղկեր,
Ծաղկեր քյու արեվու նըման:

Թակյաւոր, ի՞նչ պիրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեվու նըման.
Անքանամ ծաղիկ, տոր կըծաղկեր,
Ծաղկեր քյու արեվու նըման:

Թակյաւոր, ի՞նչ պիրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեվ քյեզ նըման,
Կյըներպույ ծաղիկ, տոր կըծաղկեր,
Ծաղկեր քյու արեվու նըման:

## ԹԱԿՅԱՒՈՐՆ ԷՐ ԹԱՔՅ

Թակյաւորն էր թաքյ,
Թակյաւորն էր թաքյ,
Խաչկապն էր վիզ, խաչ.
Թակյաւոր, սօլերն էր կարմիր,
Արեվն էր կանաչ: